

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՍՈՒՐԵՆԻ

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԵՐԻ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

**РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
АРУТЮНЯН ЛЕВОН СУРЕНОВИЧ**

**СИСТЕМА ФОРМЫ (ИСТОЧНИКОВ) ПРАВА В РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ:(ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

Իրավաբանական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Հ.Ջ Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ **«Եվրասիա» միջազգային համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի դեկտեմբերի 21-ին ժ. 15⁰⁰-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2022 թվականի նոյեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու



Ջ.Հ.Հայրապետյան

**Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права
НАН РА**

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Сафарян Г.Г.**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Степанян О.М.**

кандидат юридических наук, **Саргсян О.З.**

Ведущая организация: **Международный университет «Евразия»**

Защита состоится 21 декабря 2022 г. 15⁰⁰ часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван, 0051, Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 10 ноября 2022 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук



Дж. А. Айрапетян

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Իրավունքի ձևերի (աղբյուրների) հասկացությունը իրավագիտության բարդ ու վիճահարույց հիմնախնդիրներից է: Հիմնախնդրի հետազոտության արդիականությունն առավել կարևորվում է մեզանում իրականացվող դատաիրավական և սահմանադրական բարեփոխումների տեսանկյունից: Այդ գործընթացում վերանայվում են իրավունքի հին աղբյուրները, նորմերը, նոր իմաստավորում ու բովանդակություն են ստանում իրավունքի այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են՝ դատական նախադեպը, նորմատիվ պայմանագրերը, դոկտրինը, որոնք նախկինում կամ շեմից մերժվում էին, կամ դիտվում էին որպես իրավակիրառ գործունեությանը նպաստող «ղեկավար ցուցումներ» և այլն:

Հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման ոլորտում օբյեկտիվ անհրաժեշտություն է նաև նորովի մեկնաբանել և արժեքավորել իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը, դրանց աստիճանակարգում դատական իշխանության կողմից ընդունված ակտերի իրավաբանական նշանակության հետ կապված հիմնահարցերը:

Այս առումով, պատահական չէ, որ արդի ժամանակաշրջանում իրավունքի ձևերի (աղբյուրների) տեսության բազմաթիվ հիմնահարցերի շարքում, գիտնական-իրավաբանների սևեռուն ուշադրության կենտրոնում են գտնվում իրավական ձևերի աստիճանակարգման և դրանց փոխհարաբերակցության հիմնախնդիրները:

Նշված հիմնահարցերի հետազոտությունն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գործնական-կիրառական նշանակություն:

Առանց կայուն և արդյունավետ իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգի անհնար է իրավական պետության ձևավորումը և ժողովրդավարական հասարակության կայացումը:

Անընդհատ զարգանալով և ձևափոխվելով, այդուհանդերձ, իրավունքի ձևերը (աղբյուրները) տարբեր իրավական համակարգերում պահպանել են իրենց էական և կայուն որակական հատկանիշները և դրա հետևանքով հասարակական

բազմաթիվ ու բազմատեսակ հարաբերությունների նորմատիվ կարգավորումը զարգացած իրավական համակարգերում առանձնանում է իր կայունությամբ ու ճկունությամբ: Այս առումով անհրաժեշտություն է առաջացել համակողմանի ուսումնասիրել ազգային իրավունքի համակարգի իրավական ձևերի (աղբյուրների) տեսակները, դրանց փոխհարաբերակցության և աստիճանակարգման հետ կապված հարցերը: Հետևաբար, իրավունքի ձևերի (աղբյուրների) համալիր հետազոտությունը՝ կապված իրավունքի համակարգի և իրավահասկացության հետ, ձեռք է բերել տեսական և գործնական զգալի նշանակության:

Վերոնշյալով է պայմանավորված ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը և հրատապությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Իրավունքի աղբյուրների հետ կապված հիմնախնդիրները ուսումնասիրվել են ինչպես խորհրդային ժամանակաշրջանի իրավագիտության¹, այնպես էլ հետխորհրդային շրջանի իրավունքի տեսությունում²:

Հայրենական իրավագիտությունում ուսումնասիրվել է ազգային իրավական համակարգի ասպեկտով իրավունքի ձևերի (աղբյուրների) հիմնախնդիրը³ մինչ սահմանադրական և դատաիրավական բարեփոխումները:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշյալ աշխատանքները, այդուհանդերձ գտնում ենք, որ իրավունքի ձևերի (աղբյուրների) հիմնախնդրի հետ կապված սույն ատենախոսությունը համալիր գիտական մենագրական հետազոտություն է, որը

¹ Տե՛ս **Александров Н.Г.** Понятия источника права//Учен. Труды ВИЮН. М., 1946. Вып. VIII
Кечекян С.Ф. О понятии источника права//Учен.Зап. МГУ: труды юрид. Фак-та. 1946 Вып. 116. Кн. 2; Шембанов А.Ф. Формы советского права. М., 1968; Зивс С.Л. Источники права. М., 1981 և այլն:

² Տե՛ս Марченко М.Н. Источники права; учеб. пособие М., 2014, **Дробышевский С.А. Данцева Т.Н.** Формальные источники права. М., 2011 և այլն:

³ Տե՛ս **Օհանյան Վ.Ա.** Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսագործական վերլուծություն): Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2009.

ներառում է տեսական և իրավահամեմատական առումները, և այս իմաստով, որոշակիորեն լրացնում է այն բացը, որը գոյություն ունի հայրենական (և ոչ միայն) իրավագիտության մեջ:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Սույն ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է համալիր վերլուծության ենթարկել իրավունքի ձևի (աղբյուրի) հասկացությունը, տարբեր իրավական համակարգերում իրավունքի ձևերի (աղբյուրների) հայեցակարգերը և դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները: Հետամուտ լինելով հիմնական նպատակին՝ հեղինակը փորձել է լուծել հետևյալ խնդիրները.

- ✓ Բացահայտել իրավահասկացության և իրավունքի ձևի (աղբյուրի) փոխադարձ կապը և փոխներգործությունը.
- ✓ Վերլուծել իրավունքի ձևի (աղբյուրի) ընդհանուր հակասությունը և դրա հետ կապված հիմնական տեսանկյունները.
- ✓ Բացահայտել ազգային իրավունքի համակարգում իրավունքի ձևերի աստիճանակարգը.
- ✓ Բացահայտել տարբեր իրավական համակարգերում իրավունքի ձևերի (աղբյուրների) հայեցակարգերի էությունը և բովանդակությունը.
- ✓ Քննարկել իրավունքի տարբեր աղբյուրների՝ դատական նախադեպի, նորմատիվ պայմանագրի, իրավական դոկտրինայի հիմնական բնութագրիչները և դրանց դերն ու նշանակությունը իրավակարգավորումների ոլորտում:

Հետազոտության օբյեկտը և առարկան. Ատենախոսական աշխատանքի օբյեկտը իրավունքի աղբյուրների համակարգային բազմազանությունն է: Հետազոտության առարկան է պոզիտիվ իրավունքի ձևերն (աղբյուրներն) ու դրանց առանձնահատկություններն ազգային իրավունքի համակարգում:

Հետազոտության գիտական նորույթը. Սույն հետազոտության նորույթը նրանում է, որ համալիր և համակարգային վերլուծության է ենթարկվել իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգը, բացահայտվել են դրանց սոցիալական, քաղաքական

հիմքերը, ինչպես նաև աշխատանքում հիմնավորում է ազգային իրավական համակարգում իրավունքի համեմատաբար նոր աղբյուրների ընդգրկման անհրաժեշտությունը: Այս առումով սույն հետազոտությունն ունի որոշակի գիտական-կիրառական նշանակություն՝ ազգային իրավունքի զարգացման ճանապարհին առկա խնդիրներին գիտականորեն հիմնավորված լուծումներ գտնելու համար: Գիտական նորույթի տարրեր են պարունակում պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում, ինչպես նաև հետազոտության ասրդյունքների հիման վրա մշակված տեսական հետևություններում, եզրահանգումներում և գործնական առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝

1. Ընդհանրապես՝ իրավունքը մարդկանց գիտակցված և իմաստավորված, նպատակաուղղված, համատեղ գործունեության արդյունք է, որի հիմնական սոցիալական նշանակությունը դրանց խաղաղ գոյակցության և առաջընթաց զարգացման և իրավական կանոնակարգման մեջ է:
2. Իրավունքի ձևը (աղբյուրը) նյութական առումով՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող այն հասարակական հարաբերություններն են, որոնց նորմատիվ կարգավորումը որպես հասարակական կյանքի բնականոն կենսագործունեության անհրաժեշտություն, գիտակցվում է օրենսդրի կամ այլ իրավաստեղծ մարմնի կողմից, անցնում նրանց իրավագիտակցության պրիզմայով և վերածվում է պոզիտիվ իրավական նորմի:
2. Ձևական իրավաբանական իմաստով՝ իրավունքի ձևը (աղբյուրը) իրավական նորմի արտահայտման առանձնահատուկ ձև է, որն օժտված է համապարտադրելիության, նորմատիվության, որոշակիության, համապարփակության, հրապարակայնության, իրավական և սոցիալական լեգիտիմության հատկանիշներով:
3. Իրավունքի (ձևի) աղբյուրի հասկացությունը անհրաժեշտ է դիտարկել հետևյալ հիմնական տեսանկյունով՝ պատմական, սոցիալական, ձևական-իրավաբանական և քաղաքական.

ա) Իրավունքի աղբյուրի պատմական հիմք է հադիսանում պատմականորեն ձևավորված իրավական ավանդույթները, սովորույթները, մշակույթը և ազգային իրավագիտակցությունը, որոնք որոշակիորեն ներգործում են իրավաստեղծ գործունեության, հետևաբար նաև արդի իրավունքի աղբյուրների ձևավորման գործընթացում:

բ) Իրավունքի ձևի (աղբյուրի) սոցիալական հիմքն ունի ոչ միայն օբյեկտիվ, այլ օբյեկտիվ-սուբյեկտիվ բնույթ, քանզի մարդկային բանական գործունեությունից (որպես կենսագործունեության սուբյեկտի) դուրս ընդհանրապես անհնար է սոցիալական ինստիտուտների, այդ թվում՝ իրավական ձևերի (աղբյուրների) ձևավորումը և դրանց բնականոն գործառնության ապահովումը: Իրավունքի ձևի սոցիալական հիմքն է նաև հասարակական պահանջարկը, հասարակական հարաբերությունների կանոնակարգումը, հասարակությունում օրինականության և իրավակարգի ապահովումը, անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և այն բոլոր հարցերի իրավակարգավորումը, որոնք կապված են հասարակական կյանքի բնականոն գործառնության համար իրավական ապահովման անհրաժեշտության հետ:

գ) Իրավունքի ձևի (աղբյուրի) հիմնական քաղաքական հիմքը՝ պետությունն է, որպես ինքնիշխան հանրային քաղաքական իշխանության մարմնավորողի: Այս առումով պոզիտիվ իրավունքի ձևավորման հիմնական ձևը (աղբյուրը)՝ պետության իրավաստեղծ գործունեությունն է, որի շնորհիվ ստեղծվում, փոփոխվում և վերացվում են իրավադրույթները: Բացի պետությունից, իրավունքի ձևի մշակման գործընթացում էական դերակատարում ունեն հասարակության քաղաքական համակարգի ինստիտուտներն ու կառուցվածքային այլ տարրերը (պատգամավորները, քաղաքական կուսակցությունները և քաղաքական շարժումները (միավորումները, կոալիցիաները):

դ) Իրավունքի ձևի աղբյուրի ձևական (իրավաբանական) հիմքն են՝ բնական իրավունքի հայեցակարգը, իրավագիտակցությունը և իրավական մշակույթը, որոնք

իմպլեմենտացիայի են ենթարկում պատմական, սոցիալական, քաղաքական հիմքերից ճառագայթվող պահանջարկները և ըստ անհրաժեշտության ձևավորում են իրավական նորմերը (վարքագծի համապարտադիր կանոնները):

5. Իրավունքը և դրա ձևերը (աղբյուրները) օբյեկտիվորեն օժտված են համակարգավորվածությամբ: Համակարգավորվածությունն իրավունքի ձևերի (աղբյուրների) աստիճանակարգում հանդես է գալիս երեք իմաստային բովանդակությամբ՝ առաջին համակարգվածությունը հասկացվում է գործնական առումով՝ որպես փոխկապված, փոխայամանավորված և փոխլրացնող իրավական նորմերի համակարգ, երկրորդ՝ համակարգվածությունը հասկացվում է ձևական իրավաբանական առումով, այսինքն՝ որպես իրավունքի ձևերի (աղբյուրների) ընդհանուր հայտարար հանդես են գալիս՝ իրավական մշակույթը, իրավագիտակցությունը, ձևավորված իրավաբանական տեխնիկան, հասարակական և իրավական պրակտիկան, երրորդ՝ համակարգվածությունը հասկացվում է որպես իրավունքի ձևերի (աղբյուրների) կուռ տրամաբանական համակարգ, որում նվազագույնի պետք է հասնեն իրավական հակասությունները և անորոշությունները և պետք է գործի խիստ աստիճանակարգված իրավական նորմերի համակարգ՝ ըստ իրավաբանական ուժի և ըստ գործունեության ոլորտի (օրինակ՝ դատական ակտը չի կարող փոխվել, լրացվել կամ վերացվել այլ պետական մարմնի, այդ թվում բարձրագույն ներկայացուցչական մարմնի կողմից):

6. Ազգային իրավունքի (աղբյուրների) աստիճանակարգում և իրավակարգավորումների ոլորտում առաջնային և որոշիչ դերակատարում ունի նորմատիվ իրավական ակտը, որը տեսական հավաքական հասկացություն է և ներառում է պոզիտիվ իրավունքի ձևերի (աղբյուրների) զգալի մասը և արտահայտվում է հատուկ գրավոր ձևաչափով՝ ըստ ընդունող սուբյեկտների (ժողովուրդ, պետական իշխանության և կառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք, տեղական ինքնակառավարման մարմիններ):

Ազգային իրավունքի աստիճանակարգում նորմատիվ իրավական ակտը՝

սահմանադրությունը, սահմանադրական օրենքը, սովորական օրենքը, օրենսգիրքը, ենթաօրենսդրական ակտը գերակա են իրավունքի մյուս աղբյուրների նկատմամբ, բացառությամբ՝ վավերացված միջազգային պայմանագրերի:

7. Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժով օժտված նոմատիվ իրավական, քաղաքական-իշխանական, հասարակական դաշինքի ակտ է, որի բովանդակային առումներն են՝ սահմանադրականությունը, սահմանադրական մշակույթը, գերակայությունը և անմիջական գործողությունը: Այս առումով, սահմանադրությունը չի կարելի նույնացնել օրենքի՝ սահմանադրական օրենքի, օրգանական օրենքի, սովորական օրենքի հետ, քանի որ առաջին՝ Սահմանադրությունը նաև հասարակական-քաղաքական յուրահատուկ դաշինք (պայմանագիր) է քաղաքացիական հասարակության և իշխանության միջև, երկրորդ, Սահմանադրությունը դաշինք է նաև պետության և քաղաքացու միջև՝ փոխադարձ իրավունքներով և պարտավորություններով հանդերձ, երրորդ, Սահմանադրությունն ամրագրում է մարդու և քաղաքացու սոցիալ-իրավական կարգավիճակը և սահմանում է դրա երաշխավորված պաշտպանության համար համապատասխան պետաիրավական կառուցակարգ: Մնացած բոլոր նորմատիվ իրավական ակտերը կամ պետք է բխեն Սահմանադրությունից կամ համեմայնդեպս՝ չհակասեն Սահմանադրության դրույթների, իմաստային բովանդակությանը (ողջախոհության տեսանկյունից):

8. ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերը ազգային իրավունքի աղբյուրների համակարգում զբաղեցնում են Սահմանադրությունից հետո, օրենքներից առաջ: Վերջիններս չպետք է հակասեն վավերացված միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) դրույթներին, իսկ ներպետական մարմինների իրավակիրառ պրակտիկան չի կարող հակասել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային մարմինների իրավակիրառ պրակտիկային:

9. Ազգային իրավունքի առաջնային աղբյուրներից են օրենքները (սահմանադրական

և սովորական), որոնք օժտված լինելով բարձրագույն իրավաբանական ուժով, չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) դրույթներին, մարդու բնական և հիմնական իրավունքներին ու ազատություններին:

10. Օրենսգիրքը համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորելու և համակարգված նորմատիվ իրավական ակտ է և օժտված է տվյալ ոլորտում բարձրագույն իրավաբանական ուժով: Այն չի կարող, հակասել ՀՀ Սահմանադրությանը, այլ սահմանադրական օրենքներին և ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) դրույթներին: Օրենսգրքի դրույթներին չի կարող հակասել նման տիպի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող այլ օրենսդրական ակտը, եթե վերջինում դրա մասին հատուկ նորմ (նորմեր) նախատեսված չէ:

11. Ենթաօրենսդրական ակտերը ընդունվում են Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և պաշտոնատար անձինք, որոնք չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) դրույթներին, սահմանադրական և սովորական օրենքներին, բարձրագույն դատական ատյանների օրինական ուժի մեջ մտած որոշումներին, ձևավորված միջազգային և ազգային իրավակիրառ պրակտիկային:

Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում միայն պաշտոնական հրապարակումից հետո և պետք է համապատասխանեն նաև իրավաօրինականության, իրավական որոշակիության և ոլորտային կարգավորումների սկզբունքներին:

12. Ազգային իրավունքի օժանդակ կամ երկրորդային աղբյուրների համակարգն են կազմում՝ անհատական իրավական ակտը, ներքին իրավական ակտը, իրավական սովորույթը, նորմատիվ պայմանագրերը, դատական նախադեպը, իրավական դոկտրինը և բանականությունը: Այս առումով գտնում ենք, որ իրավական դոկտրինը և բանականությունը կանխորոշում են նաև իրավաստեղծ, իրավակիրառ և

իրավապաշտպան գործունեության էությունն ու բովանդակությունը:

Հետազոտության մեթոդաբանության հիմունքները.

Հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր աշխարհայեցակարգային՝ համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, տրամաբանական հնարքները, եղանակներն ու միջոցները, այնպես էլ մասնավոր՝ համեմատական, ձևական իրավաբանական, նկարագրական վերլուծության, համակարգային կառուցվածքային վերլուծության մեթոդները:

Հետազոտության տեսական և նորմատիվ իրավական հենքը. Աշխատության հիմքում ընկած են նաև արևմտաեվրոպական, ռուսական և հայրենական գիտնական-իրավաբանների՝ Ռ. Դավիդի, Քրիստոֆեֆ Օսակվեի, Վ. Թոմանովի, Վ. Ներսեսյանցի, Ա. Շումիլովի, Ա. Մարչենկոյի, Ա. Բոբոտովի, Ա. Ռոմանովի, Ն. Ապիրյանի, Ռ. Պետրոսյանի, Գ. Սաֆարյանի, Հովի. Ստեփանյանի, Ա. Վաղարշյանի և այլոց աշխատությունները:

Հետազոտության համար նորմատիվ հիմք են կազմել՝ ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական և սովորական օրենքները, միջազգային պայմանագրերը, ենթաօրենսդրական ակտերը, դատական նախադեպերը, նորմատիվ պայմանագրերը, դոկտրինան և սովորության իրավունքը:

Հետազոտության տեսական և գործնական կիրառական նշանակությունը.

Աշխատանքի տեսական արդյունքները կարող են օգտագործվել ուսումնական դասընթացներում, ինչպես նաև տվյալ թեմատիկայով գիտական հետազոտությունների իրականացման ժամանակ:

Աշխատանքի գործնական-կիրառական նշանակությունը նրանում է, որ աշխատանքում ձևակերպված հետևությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության ընթացքում, ինչպես նաև դատական և վարչական պրակտիկայում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի

Պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ կայացվել է աշխատանքի նախնական քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության: Թեկնածուական ատենախոսության առավել կարևոր դրույթներն իրենց արտացոլում են գտել հեղինակի կողմից հրատարակած գիտական հոդվածներում և մենագրություններում:

Աշխատանքի կառուցվածքը.

Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնք ներառում են 14 ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը.

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորվում է թեմայի հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվում է գիտական նորույթը, պաշտպանության հիմնական դրույթները, աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Իրավունքի ձևի (աղբյուրի) տեսական-մեթոդաբանական առումները եվ սոցիալ-քաղաքական հիմքերը»** բաղկացած է երեք ենթագլուխից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Ժամանակակից իրավունքի ձևերի (աղբյուրների) տեսական հարցադրումների շուրջ»** վերնագրով, խորքային վերլուծության են ենթարկվում ժամանակակից իրավունքի ձևերի (աղբյուրների) տեսական և հայեցակարգային մոտեցումները:

Ժամանակակից իրավունքին վերաբերող բազմաթիվ հարցերի շարքում ավանդաբար հետազոտողները հատուկ ուշադրություն են հատկացնում իրավունքի աղբյուրների հարցերին՝ դրանց հասկացությանը, բովանդակությանը, իրավունքի նորմերի հետ հարաբերակցությանը, իրավական համակարգում դրանց դերին և նշանակությանը ու այլն: Եվ պատահական չէ, քանի որ տվյալ հարցը ունի հսկայական ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի ձևի (աղբյուրի)**

սոցիալական հիմքերը» վերնագրով, բացահայտվում են իրավունքի աղբյուրի սոցիալական հիմքերը և դրանց նշանակությունը իրավակարագվորումների ոլորտում:

Իրավունքի սոցիալական հիմքի վերաբերյալ հարցի բարդությունը նրանում է, որ այն հնարավոր չէ նշել այնպիսի տրամաբանական գործառնության միջոցով, ինչպես բացահայտ սահմանումը: Իրավունքի սոցիալական հիմքը բարդ է, բազմանիստ և դինամիկ: Եվ չնայած իրավունքի սոցիալական պայմանավորվածության վերաբերյալ դրույթները վաղուց ճանաչում և զարգացում են ստացել իրավագիտությունում, դրանք շարունակում են գրավել իրավագետների ուշադրությունը: Մենք կարծում ենք, որ օգտագործելով իրավունքի սոցիալական հիմքերի վերաբերյալ կուտակված գիտելիքների պոտենցիալը, անհրաժեշտ է իրավագիտությունում ինտեգրատիվ ուղղության հունով շարունակել տվյալ ուղղության տեսական հետազոտությունները և հիմնավորումները:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի աղբյուրների (ձևերի) քաղաքական հիմքերը»** անմիջականորեն կապվում են պետության էության, նրա սոցիալական նշանակության, քաղաքական ռեժիմի, կառավարման ձևի, իշխանության իրականացման մեթոդների և եղանակներ հետ:

Իրավական նորմերի ընդհանուր նորմատիվությունը և հարկադրականությունը համատեղ վերված ձևավորում են պոզիտիվ իրավունքի այնպիսի հատկանիշ, ինչպես իրավաբանական ուժը: Համապատասխանաբար, իրավունքը ձեռք է բերում իրավաբանական ուժ պետական իշխանության իրավաստեղծ գործունեության արդյունքում: Պետությունը դիտարկվում է որպես իրավունքի իրավաբանական ուժի հիմնական քաղաքական աղբյուր:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Իրավունքի աղբյուրների (ձևերի) համակարգային-հիերարխիկ բնութագրական հատկանիշները»** վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Իրավունքի աղբյուրների (ձևերի) համակարգային**

բնույթը» վերնագրով, հանգամանորեն վերլուծվում են իրավունքի աղբյուրների համակարգային բնույթը, առանց որի իրավունքի աղբյուրները կվերածվեն քաոսի և խառնաշփոթ կտիրի իրավակարգավորումների ոլորտում: Համակարգվածության շնորհիվ իրավունքի աղբյուրները գործում են մեկ միասնական, փոխկապված և փոխապայմանավորված շրջանակներում, որն ապահովում է իրավակարգավորումների ներդաշնակությունը և արդյունավետությունը:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի աղբյուրների (ձևերի) աստիճանակարգության խնդիրները»** վերնագրով, բացահայտվում է իրավունքի աղբյուրների աստիճանակարգության (հիերարախիայի) էությունն ու նշանակությունը ողջ իրավական համակարգում:

Աստիճանակարգությունը (հիերարխիան) կապում է իրավունքի աղբյուրների առանձին տեսակներ, խմբեր և ենթախմբեր ամբողջական համակարգում և ապահովում հասարակական հարաբերությունների վրա իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի նպատակաուղղված ազդեցությունը:

Իրավունքի աղբյուրների հիերարխիան հնարավորություն է տալիս առավել լիարժեք արտահայտել իրավունքի աղբյուրների բոլոր տեսակների, խմբերի, ենթահամակարգերի և մակարդակների բարդ համագործակցությունը, առավել հստակ սահմանել իրավունքի աղբյուրների համակարգում իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի տեղը և գնահատել դրա կարգավորիչ հատկությունները:

Աշխատանքի երրորդ գլխում՝ **«Ազգային իրավունքի առաջնային ձևերը (աղբյուրները)»** վերտառությամբ, բաղկացած է հինգ ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«ՀՀ Սահմանադրությունը որպես իրավաքաղաքական առաջնային փաստաթուղթ»** վերնագրով, հեղինակը սահմանադրությունը դիտարկում է ոչ միայն օրենքի տարատեսակ (հիմնական օրենք), այլև յուրահատուկ հասարակական դաշինք, իրավաքաղաքական գերակա փաստաթուղթ, որով ամրագրվում է տվյալ հասարակության պետաիրավական կառույցը, սոցիալական բնույթը և ողջ հասարակարգի և իրավակարգի զարգացման

հիմանական ուղղությունները երկարատև ժամանակահատվածում:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Սահմանադրական օրենքները և սովորական օրենքները ազգային իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգում»** վերնագրով, համակողմանի ուսումնասիրվում է բովանդակային առումով դրանց իրավաբանական ուժի առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված իրավական համակարգի մյուս տարրերի առանձնահատկությունները:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագիրը (համաձայնագրերը) որպես ազգային իրավունքի առաջնային աղբյուր»** վերնագրով, բացահայտվում է վավերացրած միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի, կոնվենցիաների, պակտերի) էությունը, բովանդակային առանձնահատկությունները, տեղն ու դերը ներպետական իրավունքի աղբյուրների աստիճանակարգում:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ **«Ենթաօրենսդրական ակտերի աստիճանակարգման հիմնախնդիրը ազգային իրավունքի աղբյուրների համակարգում»** վերնագրով, հանգամանորեն վերլուծվում են ենթաօրենսդրական ակտերի հասկացությունը, դրանք ընդունող իրավասու մարմինների շրջանակը, իրավաբանական ուժը, տեղն ու դերը նորմատիվ իրավական ակտերի շրջանակում և իրավակարգավորումների ոլորտում:

Երրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ **«Տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը»** վերնագրով, համակողմանի դիտարկվում է դրանց դերն ու նշանակությունը տեղական նշանակության հարցերի իրավական կարգավորման տեսանկյունից:

Աշխատանքի չորրորդ գլխիսը՝ **«Ազգային իրավունքի երկրորդային (օժանդակ) ձևերը (աղբյուրները)»** վերտատությամբ, որը բաղկացած է չորս ենթագլխից, որոնցում հանգամանորեն վերլուծության են ենթարկվում իրավական սովորույթի, նորմատիվ պայմանագրի, դատական նախադեպի և իրավական դոկտինի

(ուսմունքի, հայեցակարգի) բովանդակային առանձնահատկությունները և դրանց դերակատարման հետ կապված խնդրահարույց հարցերը իարվակարգավորումների ոլորտում:

Ատենախոսության հիմնական եզրակացություններն են.

1. Դրական /պոզիտիվ/ իրավունքի էական հատկանիշներից է դրա ձևական որոշակիությունը: Իրավական նորմերը պետք է պարտադիր օբյեկտիվացված լինեն, արտահայտված պետական-պաշտոնական այս կամ այն ձևով, որոնք հանդիսանում են նրա գոյության միջոցը և կենսապայմանը: Առանց որի իրավական նորմերը չեն կարող գործադրվել և իրենց խնդիրները հասարակական հարաբերությունների կարգավորման բնագավառում: Հետևաբար, իրավունքի աղբյուրները պետական կամքի պաշտոնական ձևականորեն որոշակիացված վարքագծի համապարտադիր կանոններ են:

2. Իրավաբանական գրականության մեջ իրավունքի ձևերի (աղբյուրների) հասկացության միասնական մոտեցման բացակայությունը, պայմանավորված լինելով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, ինչպիսիք են իրավահասկացողության պարադիգմը, իրավական մշակույթը և իրավական համակարգի տիպը, պոզիտիվ և բնական իրավունքի առանձնացումը, իրավունքի նորմի հասկացության տարբերությունը և այլն, թույլ է տալիս եզրակացնել, որ, մի կողմից, իրավունքի աղբյուրի համընդհանուր (ունիվերսալ), վերը թվարկված բոլոր գործոնների լույսի ներքո ընդունելի բնորոշում տալը թերևս, անլուծելի խնդիր է: Սակայն մյուս կողմից, իրավունքի աղբյուրին հասցեագրված ցանկացած բնորոշում կոչված է արտացոլելու այդ բարդ և կատեգորիայի որևէ էական կողմ կախված այն նպատակներից, որոնք իր համար նախանշում է հնտագոտողը:

3. Ընդամին, հիմնարար տեսական կատեգորիա հանդիսանալով հանդերձ՝ իրավունքի աղբյուրն ունի առանձնահատուկ գործնական նշանակություն և կիրառություն: Հաշվի առնելով հիշյալ հանգամանքը, ինչպես նաև իրավական կատեգորիաները իրավունքի առջև ծառայած խնդիրների լուծման համար

գործնականում առավել արդյունավետ օգտագործելու անհրաժեշտությունը, հետազոտության մեջ իրավունքի աղբյուրի այլ լրացուցիչ հատկանիշներ արտացոլող, հեղինակային բնորոշում առաջարկվեց, և դրանք քննարկվել են հենց իրավունքի աղբյուրների գործնական նշանակության վրա շեշտադրում կատարելով:

4. Իրավունքի աղբյուրների՝ որպես իրավական կատեգորիայի գործնական նշանակությունը առավել ցայտուն դրսևորվում է իրավական կարգավորման կառուցակարգի, դրա տարրերի և փուլերի, իրավունքի իրականացման գործընթացի հետ փոխադարձ կապի և հարաբերակցության մեջ՝ իրավական կարգավորման նպատակների լիարժեք կենսագործման և իրավունքի իրացման գործում իրավունքի աղբյուրների դերի առումով: Իրավունքի աղբյուրը այս պարագայում վեր է ածվում իրավունքի նորմերի կարգավորիչ ներգործության և իրականացման ներուժի վերաբերյալ դատելու հնարավորություն տվող կարևոր գործոնի:

5. Լայն իմաստով իրավական կարգավորման կառուցակարգի հետ իրավունքի աղբյուրների փոխազդեցությունը դրսևորվում է նրանում, որ իրավունքի աղբյուրը հանդիսանում է իրավական կարգավորման կառուցակարգի առաջնային տարրի՝ իրավունքի նորմի արտաքին արտահայտման ձև, և որպես այդպիսին սերտորեն կապված է իրավունքի բովանդակության՝ նորմում ամրագրված վարքագծի կանոնի հետ: Իրավունքի նորմերի կարգավորիչ ներգործության առավելագույն ուժն ու արդյունավետությունը հնարավոր են բովանդակության ու ձևի փոխադարձ համապատասխանության դեպքում: Համապատասխանության պահանջը թելադրում է իրավունքի արտաքին արտահայտման այնպիսի ձևի ընտրություն, որն առավելապես համապատասխանում է բովանդակությանը և համահունչ է դրա կորիզը կազմող վարքագծի կանոնի առավելագույն իրականացման գերխնդրին:

6. Իրավունքի նյութական աղբյուրների հիմքը հասարակական զարգացման օբյեկտիվ պահանջմունքների համակարգն է, նրա բազիսային հարաբերությունները: Սակայն հասարակական պահանջմունքներն ինքնին, ինքնաբերաբար չեն դառնում իրավունքի նյութական աղբյուր: Այդ պահանջմունքներն իրավական ձև են ստանում

այն դեպքում, երբ օրենսդիրը գիտակցում է դրանց անհրաժեշտությունը և իր իրավագիտակցության պրիզմայով անցկացնելով ձևակերպում է դրական իրավունքը /օրենքը և այլ նորմատիվ-իրավական ակտերը/: Գիտակցելով այդ անհրաժեշտությունը, օրենսդիրը, սահմանված կարգով, պետության անունից ձևավորում է իրավական նորմը կամ սանկցիավորում արդեն իսկ գոյություն ունեցող վարքագծի կանոնը /սովորույթը/:

7. Իրավաբանական իմաստով «իրավունքի աղբյուր» եզրույթը իրավական նորմերի արտահայտման առանձնահատուկ ձև է, որն օժտված է համապարտադրելիության, իրավական նորմերի որոշակիության, հրապարակայնության, ընդհանրացվածության, կոնկրետության հատկանիշներով, և հասցեագրված է անորոշ թվով սուբյեկտների: Իրավունքի աղբյուրի նշված հատկանիշները պետք է դիտարկել ողջախոհության և բանականության տեսանկյունից:

8. Իրավունքի աղբյուրը իրավունքի բովանդակությունը կազմող վարքագծի կանոնների արտաքին արտահայտման այնպիսի պաշտոնական ձևականորեն որոշակիացված ձև է, որն առավելապես նպաստում է իրավական կարգավորման նպատակների կենսագործմանը և իրավունքի լիարժեք իրացմանը: Իրավունքի աղբյուրի առաջարկվող բնորոշումը թույլ է տալիս դրա հիմնահարցերի շարքում քննարկման առարկա դարձնել իրավունքի աղբյուրի որակական բնութագրերը և դրա ընտրության չափանիշները, դիտարկել իրավունքի աղբյուրների տեսակների տեղը և հարաբերակցությունը որոշակի իրավական մշակույթ և զարգացման մակարդակ ունեցող հայ իրավական իրականությունում ոչ միայն դրանց իրավափիլիսոփայական պատկերացումների, այլև իրավունքի կարգավորիչ ներուժի և իրավական կարգավորման նպատակների իրականացման տեսանկյունից:

9. Անցումային իրավական համակարգերում, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, իրավունքի ձևի ընտրությունն ու փոփոխությունը իրավունքի աղբյուրների տեսակների և աստիճանակարգության կուռ ավանդույթներ ունեցող պետությունների համեմատությամբ ավելի դյուրին կարող են տեղի ունենալ, ինչը

ընդգծում է ազգային իրավունքի աղբյուրների էությունը, իրավական կարգավորման կառուցակարգի արդյունավետության տեսանկյունից:

10. Կատարված հետազոտության արդյունքները, որոնք տեղ են գտել սույն ատենախոսության մեջ, վկայում են այն մասին, որ վերը հիշատակված պատկերացումների արդյունքում ազգային իրավունքի աղբյուրների տարբեր տեսակների հարաբերակցությունը, դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը ազգային իրավական համակարգում հաճախ հասկացվում և դրսևորվում են խեղաթյուրված ձևով: Դա հատկապես նկատելի է միջազգային պայմանագրերի դրույթների և իրավակիրառ պրակտիկայի դիրքորոշումների առումով: Մինչդեռ իրավունքի աղբյուրների ընտրության հիմնախնդրի տեսանկյունից՝ իրավունքի աղբյուրների տեսակների քննարկումը հնարավորություն է տալիս վեր հանել իրավունքի աղբյուրների հիմնախնդրի հետ կապված նոր մոտեցումներ և լուծումներ:

11. Պատմականորեն ձևավորված պետական կամքի արտահայտման պաշտոնական ձևերը բազմազան են /օրենք, ենթաօրենսդրական ակտ, դատական և վարչական նախադեպ, նորմատիվ պայմանագիր/ և տարբեր իրավական համակարգերում օժտված են տարբեր իրավաբանական ուժով ու հեղինակությամբ, որը պայմանավորված է պատմականորեն ձևավորված իրավական ավանդույթներով, իրավական մտածելակերպով, իրավագիտակցությամբ և իրավական մշակույթով: Այս առումով տեսական-կիրառական և գործնական-կիրառական նշանակությամբ խիստ արդիական է իրավունքի աղբյուրների հետազոտությունն երկու առաջատար և հիմնարար իրավական համակարգերի մայրցամաքային /ռոմանագերմանական/ և նախադեպային /անգլոսաքսոսական/, համատեքստում:

12. Ենթաօրենսդրական ակտի՝ որպես ՀՀ իրավունքի աղբյուրի արդյունավետ օգտագործումը և հիմնավորված ընտրությունը հնարավոր է երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) նորմատիվ-իրավական ակտերի «ենթաօրենսդրականության» սկզբունքի հետևողական կենսագործում, օրենքը ենթաօրենսդրական ակտերով

չփոխարինելը, և բ) ենթաօրենսդրական ակտերի աստիճանակարգության տրամաբանական համակարգի ձևավորում: Այս առումով ենթաօրենսդրական ակտերի դասակարգումը և աստիճանակարգության որոշումը բացի ակտն ընդունող սուբյեկտի չափանիշից պետք է լրացվի նաև իրավասության առարկայական ոլորտի և իրավական ակտի բնույթի չափանիշներով: Ակնհայտ է նաև, որ ենթաօրենսդրական ակտի՝ որպես իրավունքի աղբյուրի նշանակության իմաստավորումը էականորեն կախված է օրենքի որպես իրավունքի աղբյուրի դերի գիտակցումից և կենսագործումից:

13. Իրավական սովորույթը ՀՀ իրավական համակարգում հանդիսանում է իրավունքի ինքնուրույն աղբյուր, դրա այնպիսի տեսակներ, ինչպիսիք են գործարար շրջանառության սովորույթները և տեղական սովորույթները, սանկցավորված են օրենսդրորեն: Թեև Հայաստանում դատական պրակտիկան սովորույթների կիրառման սակավության պայմաններում թույլ չի տալիս դատելու դրա կիրառման կանոնների մասին, գործող օրենսդրական նորմերի և սովորույթի որպես կիրառելի նորմեր պարունակող աղբյուրի տեսության մեջ ուսումնասիրված հատկանիշներից բխում է այն եզրակացությունը, որ սովորությանն նորմը պետք է կիրառվի որպես իրավունքի նորմ: Դա նշանակում է, որ դատարանի կողմից սովորությանն նորմի կիրառումը առևտրային հարաբերություններում որոշակի պայմաններում դառնում է անհրաժեշտ և չի կարող դիտարկվել որպես դատարանի իրավունք:

14. Դոկտրինան, իրավունքի ընդհանուր սկզբունքները, մասնավոր-իրավական պայմանագիրը, չհանդիսանալով իրավունքի առաջնային աղբյուր առաջարկվող բնորոշման համաձայն՝ այդուհանդերձ էապես կանխորոշում են իրավակարգավորման արդյունքները: Հատկապես հետաքրքիր են այն զարգացումները, որոնք տեղի են ունենում անցումային շրջանի հասարակությունում կապված ստանդարտ ձևերով կնքվող պայմանագրերի քանակի աճի հետ, ինչը հիմք է տալիս նորովի իմաստավորելու պայմանագրերի այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս համարել քաղաքացիաիրավական պայմանագիրը որպես իրավունքի

աղբյուր:

15. Իրավունքի աղբյուրների համակարգը և ազգային իրավական համակարգը գտնվում են մշտական փոխազդեցության մեջ: Այդ փոխազդեցության պայմաններում իրավական համակարգի տիպը որոշելու, այն դասակարգելու համար մեծ նշանակություն ունի տվյալ պետության տարածքում պատմականորեն ձևավորված իրավունքի աղբյուրների համակարգը: Ի վերջո, իրավունքի աղբյուրները իրենք ևս կազմում են իրավական համակարգի անբաժանելի մասը: Այս առումով իրավունքի աղբյուրների՝ պատմականորեն ձևավորված որոշակի տեսակները և դրանց համադրությունը պայմանավորում են իրավական համակարգի տիպը և հանդիսանում են դրա աշխարհի իրավական քարտեզում դասակարգման կարևորագույն, թեև ոչ միակ գործոն: Իրավունքի աղբյուրների տեսակների և դրանց աստիճանակարգության հետ կապված փոփոխությունները կատարվում են թե՛ իրավունքի աղբյուրների համակարգում օբյեկտիվ զարգացման արդյունքում և թե՛ քաղաքական որոշակի ուղի որդեգրելու հետևանքով, բայց անկախ դրանց առաջացման պատճառներից, կատարված փոփոխությունները, հարաբերականորեն կայուն լինելու դեպքում, առաջացնում են իրավական համակարգի զարգացման միտումների փոփոխություն: Այդուհանդերձ, իրավունքի աղբյուրների և իրավական համակարգի միջև կապն ունի նաև հակադարձ կողմ: Մասնավորապես, փոփոխական ուժգնությանն ընթացող կոնվերգենցիոն և դիվերգենցիոն գործընթացները, որոնք կանխորոշում են իրավական համակարգերի զարգացման միտումները և ուղղությունները, ազդում են նաև իրավունքի աղբյուրների համակարգի վրա:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մենագրություններ.

1) Հարությունյան Լևոն, Իրավունք ձևերի (աղբյուրների) համակարգը. համատեսական վերլուծություն: Երևան, Եվրոպրինտ, 2020, 132 էջ:

- 2) Հարությունյան Լևոն, Պոզիտիվ իրավունքի աղբյուրների համատեսական հետազոտություն: Երևան, Եվրոպրինտ 69 էջ:
- 3) Հարությունյան Լևոն (համահեղինակությամբ՝ Գ.Սաֆարյան). Իրավահասկացության հիմնական հայեցակարգերը արդի ժամանակաշրջանում: Երևան, Եվրոպրինտ, 2021, 236 էջ:
- 4) Հարությունյան Լևոն (համահեղինակությամբ՝ Գ.Սաֆարյան), Եվրոպական իրավական մշակույթը. Պատմություն և արդիականություն: Երևան, Եվրոպրինտ, 2021, 256 էջ:
- 5) Հարությունյան Լևոն (համահեղինակությամբ՝ Գ.Սաֆարյան), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի իմպլեմենտացիայի և կիրառման հիմնախնդիրները ազգային իրավական համակարգում: Երևան, Եվրոպրինտ, 2021, 276 էջ:

2. Գիտական հոդվածներ.

- 6) Арутюнян Левон. Система национального права: история и современность//«Օրինականություն», № 121, 2021, էջ 53-59,84:
- 7) Հարությունյան Լ.Ս. (համահեղինակությամբ՝ Գ.Սաֆարյան), Իրավունքի աղբյուրների հասկացությունը և ընդհանուր բնութագրականը // Երևանի «Հայրուսակ» համալսարանի գիտական և գիտամեթոդական հանդես: Երևան, 2020, էջ 91-95:
- 8) Հարությունյան Լևոն, Ժամանակակից ազգային իրավունքի աղբյուրների տեսական հիմնախնդիրները // «Օրինականություն», № 122 (2021, էջ 46-50, 75):
- 9) Հարությունյան Լևոն, Իրավունքի աղբյուրների աստիճանակարգության խնդիրները // «Օրինականություն», № 123 (2021, էջ 40-43, 72):
- 10) Հարությունյան Լևոն, Ժամանակակից ազգային իրավունքի աղբյուրների տեսական հիմնախնդիրները (համահեղինակությամբ՝ Գ.Սաֆարյան),// Երևանի «Հայրուսակ» համալսարանի գիտական և գիտամեթոդական հանդես-2021, Երևան, Էդիթ Պրինտ, 2021, էջ 135-140:
- 11) Арутюнян Левон. Геноцид армянского народа как тяжчайшее преступление человечности и прав Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան, 2022 №1, էջ 4-12. (համահեղինակ՝ Գ.Սաֆարյան).

Арутюнян Левон Суменович

**Система формы (источников) права в Республике Армения:
теоретико-правовой анализ.**

Резюме

Актуальность исследования данной работы обусловлена возрастающей ролью источников национального права в процессе праворегулирования общественных отношений. Актуальность исследования проблемы наиболее важна в контексте осуществленных и предстоящих конституционных реформ в Республике Армения. В сфере нормативного регулирования общественных отношений необходимо также по-новому интерпретировать и оценить систему источников права, проблемы, связанные с юридическим значением принятых актов судебной власти в этой системе.

Основной целью данной исследовательской работы является, подвергнуть комплексному анализу понятие и концепции источников права в различных правовых системах и их общности и особенности.

Новизна данного исследования заключается в комплексном и системном анализе понятия источников права в исторических, социальных, политических и формально-юридических аспектах. В соответствии с этим выделяются понятия исторический источник, социальный источник, политический источник и формальный (юридический) источник. В связи с этим исследование вопроса имеет определенное научно-практическое значение для поиска правомерных решений проблем, существующих на пути формирования и развития постсоциалистических правовых систем.

Элементы научной новизны содержатся в основных положениях, представляемых к защите, а также в теоретических выводах, заключениях и практических предложениях разработанных на основе результатов исследований.

В нашей работе понятие источников права рассматривается в следующих его аспектах: исторический, социальный, формальный (юридический) и политический.

А) Исторической основой источников права являются многолетние сложившиеся правовые традиции, обычаи, культура и национальное правовое сознание, которые в определенной мере влияют на процесс правотворческой деятельности, следовательно, и формирования источников права.

Б) Социальная основа источника права имеет не только объективный, но и объективно-субъективный характер, поскольку вне человеческой деятельности (как субъект жизнедеятельности) совершенно невозможно формирование и обеспечение нормального функционирования социальных институтов, в том числе правовых источников.

В) Политической основой источников права является государство, как воплощение суверенной публичной политической власти. В этом смысле основным источником формирования позитивного права является правотворческая деятельность государства, благодаря которой создаются, изменяются и отменяются правовые нормы.

Г) Формальной (юридической) основой источников права является правоспособность позитивного права, которая выражается верховенством права (правового закона), правовой и социальной легитимностью.

Материалы диссертации способствуют дальнейшей разработке концептуальных основ теории источников права.

Материалы исследования также могут быть использованы сотрудниками законодательной власти и управления, а также в учебном процессе по предметам теории права, конституционного и административного права и других отраслевых дисциплин.

Практическое значение исследования заключается в том, что сформулированные выводы и предложения могут способствовать повышению качества и эффективности праворегулирования.

Высказанные авторские суждения могут быть полезными для уточнения не только доктринального, но и практико-прикладного понимания сущности и содержания источников права.

SUMMARY

The topicality of the research of this work is conditioned by the increasing role of the sources of national law in the process of legal regulation of social relations. The urgency of the research of the problem is the most important in the context of the constitutional reforms, both past and future, in the Republic of Armenia.

In the sphere of normative regulation of social relations it is also necessary to reinterpret and assess the system of law sources, the problems related to the legal meaning of judicial acts accepted in that system.

The main purpose of this research work is to comprehensively analyze the idea and concepts of the sources of law in different legal systems and their commonalities and peculiarities.

The novelty of this study lies in a comprehensive and systematic analysis of the concept of sources of law in historical, social, political and formal-legal aspects. In accordance with this, the concepts of historical source, social source, political source and formal (legal) source are highlighted. In this regard, the study of the issue has a certain scientific and practical importance for the search of legal solutions to the problems existing on the way of establishment and development of post-socialist legal systems.

Elements of scientific novelty are contained in the main provisions presented for defense, as well as in theoretical conclusions, conclusions and practical proposals developed on the basis of research results.

In our work the concept of sources of law is considered in its following aspects: historical, social, formal (legal) and political.

a) The historical basis of sources of law is the long-established legal traditions, practices, culture and national legal consciousness. Which, to a certain extent, influence the process of law-making and, consequently, the formation of law sources.

b) The social basis of a source of law has not only objective, but also objectively-subjective nature, as outside of human activity (as a subject of life activity) it is absolutely impossible to form and ensure the normal functioning of social institutions, including legal sources.

c) The political basis of the sources of law is the state, as the embodiment of sovereign public political power. In this sense, the main source of formation of positive law is law-making activity of the state, through which legal norms are created, changed and abolished.

d) Formal (legal) basis of law sources is the legal capacity of positive law, which is expressed by the rule of law (legal law), legal and social legitimacy.

Materials of the dissertation contribute to the further development of the conceptual foundations of the theory of sources of law.

Materials of the study can also be used by employees of legislative power and management, as well as in the educational process on the subjects of the theory of law, constitutional and administrative law and other sectoral disciplines.

Practical importance of the study lies in the fact that the formulated conclusions and proposals may contribute to improving the quality and effectiveness of law regulation.

The author's views may be useful to clarify not only doctrinal, but also practical and applicable understanding of the essence and content of the sources of law.

A handwritten signature in blue ink, consisting of a large, stylized initial 'A' followed by several cursive letters, ending in a long horizontal stroke.

